Հավելված 7
«ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03»

ք. Արարատ «10» 08 2021 թ.

Արարատի քաղաքային համայնքապետարանը», ի դեմս համայքի ղեկավար Հայկ Հայկյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կառույց>>Ա/Կ-ն, ի դեմս տնօրեն Տիրուն Պողոսյանի, որը գործում է Ա/Կ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է ***30 նոյեմբերի 2021թ.***:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն --20-- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ***99.973.600 (իննսուն իններ միլիոն իններ հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:*** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Արարատի քաղաքային համայնքապետարան	<<Կառույց>>Ա/Կ
ք.Արարատ Շահումյան 34	Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
Ֆին.նախ. գործառնական վարչ.	<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 900422101171	Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ 04000436	ՀՎՀՀ04100723
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան	Տնօրեն՝ Տ.Պողոսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« 10 » 08 2021 թ. կնքված
N «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Արարատ հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի քաղաքային համայնքապետարան
ք.Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101171
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կառույց>>Ա/Կ
Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ04100723
Տնօրեն՝ Տ.Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Արարատ քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման աշխատանքներ

Ծավալաթերթ-Նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ			0,000	0,00
	Այգի			0,000	0,00
1	Ե/բետոնե հավաքովի սալերի քանդում հ-10սմ./1046.24մ2/	$մ^3$	104,62	4,237	443,28
2	Բազալտե սալերով հատակի երեսապատի քանդում	$մ^2$	240,00	0,453	108,71
3	Ճեմուղիների բետոնե ծածկույթի քանդում 10սմ հաստ./250մ2/	$մ^3$	25,00	16,217	405,44
4	Բետոնե եզրաքարերի քանդում	գմ	1538,700	0,928	1428,02
	Ընամենը	2,603	%		2385,45
	Հուշարձան			0,000	0,00
1	Բազալտե աստիճանների քանդում պահպանելով հետագա օգտագործման համար	գմ	11,10	1,034	11,48
	Ընդամենը	0,01	%		11,48
	Հասարակական սանհանգույց			0,000	0,00
1	Արտաքին պատերի գ/ավազե սվաղի քանդում	$մ^2$	21,00	0,195	4,09
	Ընդամենը	0,004	%		4,09
	Նստարաններ			0,000	0,00

1	2	3	4	5	6
1	Բետոնե սալիկներով երեսապատի քանդում	մ^2	32,000	0,570	18,24
2	Ցեմենտ ավազե սվաղի քանդում	մ^2	255,000	0,195	49,67
	Ընդամենը	**0,074**	**%**		**67,91**
	Ջրավազաններ			0,000	0,00
1	Բազալտե երեսապատի քանդում	մ^2	27,50	5,292	145,54
2	Ցեմենտ ավազե հարթաշերտի քանդում	մ^2	63,60	0,378	24,04
3	Շին աղբի հավաքում, բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	322,240	2,497	804,66
	Ընդամենը	**1,063**	**%**		**974,24**
	Շին.վերանորոգման աշխատանքներ			0,000	0,00
	Հասարակական սանհանգույց			0,000	0,00
1	50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ^2	61,000	2,293	139,84
2	Մավրոդրանիտե 300x300մմ սալերից հատակի պատրաստում	մ^2	61,00	8,902	543,03
3	Պատերի ցեմենտ ավազե սվաղ լավորակ	մ^2	172,76	1,666	287,74
4	Պատերի երեսպատում հախճասալով	մ^2	93,60	7,289	682,24
5	Պատերի ներկում լվացվող լատեքսային ներկով, համատարած մածկապատմամբ, լավորակ	մ^2	79,16	0,969	76,73
6	Առաստաղի քսահարթեցում գիպսոնիտով	մ^2	61,000	1,006	61,37

1	2	3	4	5	6
7	Առաստաղի ներկում լվացվող լատեքսային ներկով համատարած մածկապատմամբ, լավորակ	$մ^2$	61,00	1,103	67,29
8	Ալյումինե բլոկով, սպիտակ 46մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում	$մ^2$	8,32	45,837	381,36
9	Ալյումինե բլոկով, սպիտակ 46մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում	$մ^2$	1,44	41,670	60,00
10	Ալյումինե բլոկով, սպիտակ 60մմ հաստ.ջերմակամուրջով ապակեփաթեթով 4+4 արտաքին դռների տեղադրում	$մ^2$	5,88	83,786	492,66
11	Ալյումինե պրոֆիլով միջնորմներ ամրացման դետալներով	$մ^2$	16,00	18,058	288,92
12	Արտաքին պատի սվաղ ցեմենտավազային շաղախով՝ ցանցով	$մ^2$	31,500	3,221	101,48
13	Արտաքին պատի ներկում ճակատային ներկով մածկապատմամբ	$մ^2$	94,500	0,861	81,35
14	Արտաքին պատերի մաքրում ավազաշիթով	$մ^2$	41,100	0,227	9,31
15	Տանիքի թեքաստեղծ շերտի իրականացում B7,5 դասի թեթև բետոնից	$մ^3$	8,000	34,210	273,68
16	Տանիքի ջրամեկուսացում երկշերտ ստորին շերտը իզոգամ 30մմ,վերին շերտը 50մմ հաստ ավազապատ իզոգամ	$մ^2$	80,000	5,253	420,23
17	Օդատար ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.,h=0,6մ Φ100մմ,2հատ	$մ^2$	0,380	6,447	2,45
18	Ցինկապատ թիթեղից գլխադիր Φ100մմ	հատ	2,000	5,662	11,32
19	Արցունքաթափ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	$մ^2$	3,900	6,130	23,91
	Ընդամենը	4,37	%		4004,94
	Հուշարձան			0,000	0,00

1	2	3	4	5	6
1	50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	$մ^2$	39,300	2,293	90,10
2	50մմ հաստ.բազալտե սալերով հարթակի պատրաստում	$մ^2$	39,30	18,378	722,25
3	Խճի շերտի պատրաստում 8սմ հաստությամբ /523.4մ2/	$մ^3$	41,900	13,844	580,06
4	Բետոնե շերտի պատրաստում B12.5 դասի բետոնից 8սմ հաստ. /523.4մ2/	$մ^3$	41,900	38,032	1593,55
5	30մմ հաստ.բազալտե սալերով հարթակի պատրաստում	$մ^2$	523,40	12,270	6422,36
6	80x200մմ բազալտե եզրաքար տեղադրում բետոնե հիմքի վրա	գմ	360,000	4,974	1790,62
7	Բազալտե աստիճանների տեղադրում պահպանվածը	գմ	33,60	1,829	61,47
	Ընդամենը	12,29	%		11260,40
	Նստարաններ			0,000	0,00
1	Պատերիի սվաղ ցեմենտավազային շաղախով՝ ցանցով	$մ^2$	120,000	3,221	386,57
2	20մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ /հարթակ/	$մ^2$	58,000	0,959	55,61
3	30մմ հաստ.բազալտե սալերով հարթակի պատրաստում	$մ^2$	70,20	12,270	861,39
4	Նստարանի մետաղական մասերի տեղադրում 60x40x3մմ մետաղական խողովակներից	տն	0,28500	610,859	174,09
5	Փայտյա մասերի տեղադրում	$մ^3$	2,800	209,203	585,77
6	Փայտյա մասերի լաքապատում 2 անգամ	$մ^2$	196,00	0,655	128,31

1	2	3	4	5	6
	Ընդամենը	2,39	%		2191,75
	Ջրավազաններ			0,000	0,00
1	Պատերի երեսապատում 30մմ հաստ.բազալտե սալերով	մ^2	139,500	23,122	3225,50
2	30մմ հաստ.բազալտե սալերից գլխաթասերի տեղադրում	մ^2	47,300	12,270	580,39
3	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ հատակի	մ^2	263,600	1,466	386,54
4	Ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով	մ^2	331,400	4,596	1523,27
5	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ^2	319,300	1,403	448,11
	Ընդամենը	6,73	%		6163,81
	Պոմպակայան			0,000	0,00
1	Մետաղական դռան տեղադրում	տն	0,059	79,081	4,63
2	L50x50x5մմ անկյաունակի արժեքը	տն	0,03104	534,174	16,58
3	60x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	տն	0,00416	534,606	2,22
4	Պողպատե թիթեղ b=3մմ արժեքը	տն	0,02332	565,694	13,19
5	Ծխնիի արժեքը	հատ	2,000	0,803	1,61
6	Փական,բռնակ	հատ	1,000	6,688	6,69
7	Մետաղական մասերի յուղաներկում 2 անգամ	մ^2	3,900	1,249	4,87

1	2	3	4	5	6
	Ընդամենը	0,05	%		49,79
	Այգի			0,000	0,00
1	5սմ հաստ. ցեմենտավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ^3	104,170	13,233	1378,47
2	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	մ^2	2083,4	5,856	12200,43
3	30մմ հաստ.բազալտե սալերով հատակների պատրաստում	մ^2	584,70	12,270	7174,54
4	"Բ" տիպի մանրահատիկ ասֆալտբետոնի իրականացում 4սմ /ճեմուղու գոյություն ունեցող բետոնե շերտի վրա/	մ^2	1037,160	3,455	3583,16
5	Խճի շերտի պատրաստում 8սմ հաստությամբ /ճեմուղի/	մ^2	757,300	1,164	881,52
6	"Բ" տիպի մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ^2	757,300	3,455	2616,31
7	80x200մմ բազալտե մայթեզրերի տեղադրում	գմ	2019,00	4,974	10042,39
8	Նստարանների տեղադրում Նյութ – փայտ, թուջ ↔ Երկարություն – 183 սմ ↑ Բարձրություն – 70 սմ	հատ	30,000	177,232	5316,96
9	Աղբամանների տեղադրում	հատ	20,000	23,047	460,94
10	Բազալտե աստիճանների տեղադրում 150x300մմ	գմ	9,000	9,521	85,69
11	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով նհարթեցում տեղում	մ^3	4,800	4,092	19,64
12	Բետոնե կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-12.5 դասի բետոնից հենասյուների համար	մ^3	4,800	52,145	250,30
13	Անցքերի շաղափում հիմքերում L=600մմ	հատ	195,000	0,622	121,37

1	2	3	4	5	6
14	Մետաղական անկյունակե շրջանակով ,մետաղական խողովակներից ցանկապատի պատրաստում և տեղադրում	տն	3,278	66,197	216,98
15	50x50x3մմ մետաղական խողովակի արժեքը	տն	1,37800	578,561	797,26
16	40x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	տն	0,97560	523,397	510,63
17	L 25x3 մմ մետաղական անկյունակի արժեքը	տն	0,92420	625,904	578,46
18	Մետաղական ցանկապատի յուղաներկում 2 անգամ	տն	0,34224	34,146	11,69
	Ընդամենը	50,46	%		46246,72
	Մետաղական դարպաս			0,000	0,00
19	Մետաղական փոշեներկված դարպասի տեղադրում	$մ^2$	3,500	87,981	307,94
	Ընդամենը	0,34	%		307,94
	Արգելափակոց			0,000	0,00
20	Արգելափոցի տեղադրում Նյութ – թուջ, մետաղ Բարձրություն – 60 սմ	հատ	30,0	46,816	1404,48
	Ընդամենը	1,53	%		1404,48
	Ջրամատակարարման ցանց			0,000	0,00
1	Φ32x3մմ պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	11,00	2,049	22,54
2	Φ25x2.5մմ պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	25,000	2,226	55,65
3	Φ20x1.9մմպոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	10,00	2,672	26,72

1	2	3	4	5	6
4	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր 20-32մմ	հատ	25,00	0,063	1,57
5	Ø25մմ փականի տեղադրում	հատ	1,00	6,175	6,17
6	Ø20մմ փականի տեղադրում	հատ	4,00	4,931	19,72
7	Ø15մմ փականի տեղադրում	հատ	16,00	4,201	67,21
8	Լվացարանի ծորակ	հատ	7,00	6,306	44,14
9	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակառիկների և լվացարանների համար Φ15, L=0.5մ	հատ	13,00	2,006	26,08
10	Պենոպոլիստիրոլե ջերմամեկուսիչ ներքին տրամագիծը՝ Dներք= 3.2սմ ,պատի հաստությունը՝ 1.9 սմ	մ	26,00	0,241	6,26
11	Անցքի բացում պատերում	$մ^3$	0,100	19,903	1,99
12	Կենտրոնախույս պոմպ ճնշման կարգավորիչով H=20 մ, Q=0.5 լ/վրկ	հատ	1,000	231,672	231,67
13	Պողպատե կարճախողովակ երկկողմանի պարուրակով DN25,L=0.2մ,3հատ	հատ	3,000	0,936	2,81
14	Գնդային Փական DN25	հատ	2,000	5,602	11,20
15	Հակադարձ Փական DN26	հատ	1,000	5,065	5,06
	Ընդամենը	0,58	%		528,82
	Կոյուղու ցանց			0,000	0,00
1	Պոլիվինիքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=110մմ,/հիդրավլիկ փորձարկումով/	գծ.մ	12,0	1,600	19,20

1	2	3	4	5	6
2	Պոլիվինիքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=50մմ /հիդրավլիկ փորձարկումով/	գծ.մ	25,0	1,275	31,88
3	Հատակադիր զուգարանակոնք	կ-տ	6,0	29,183	175,10
4	Հոսակների տեղադրում Φ50մմ	հատ	4,000	2,079	8,32
5	Խեցե լվացարանների տեղադրում սիֆոնով	կ-տ	7,0	21,884	153,19
6	Միզաման (երկար մինչև հատակ),	հատ	3,0	14,571	43,71
7	Ուղիղ եռաբաշխիչ de110x110,	հատ	6,0	2,050	12,30
8	Ուղիղ եռաբաշխիչ de50x50,	հատ	6,0	1,641	9,84
9	Թեք եռաբաշխիչ de110x50,	հատ	2,0	1,926	3,85
10	Թեք եռաբաշխիչ de50x50,	հատ	2,0	1,634	3,27
11	Անցում de110x50,	հատ	2,000	1,182	2,36
12	Անկյունակ de50 α=90^0	հատ	6,000	1,021	6,13
13	Անկյունակ de50 α=45^0	հատ	6,000	1,021	6,13
14	Անցքի բացում պատերում	մ^3	0,100	19,903	1,99
	Ընդամենը	0,52	%		477,26
	Կոյուղու հոր			0,000	0,00
1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	18,900	4,092	77,34

1	2	3	4	5	6
2	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 7կմ /8,9մ3/	տն	16,910	2,497	42,23
3	Հետլիցք տեղի բնահողով ձեռքով ,տոփաումով	$մ^3$	10,000	0,970	9,70
4	Միաձույլ ե/բետոնե կոյուղու հորի հատակի և պատերի պատրաստում B25 W6 դասի բետոնից	$մ^3$	12,000	121,240	1454,89
5	Ամրանի արժեքը	տն	0,623	401,280	249,93
6	Միաձույլ ե/բետոնե կոյուղու հորի ծածկի սալի պատրաստում B25 W6 դասի բետոնից	$մ^3$	2,100	98,712	207,30
7	Ամրանի արժեքը	տն	0,295	401,280	118,34
8	Ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0,034	800,446	26,91
9	Կոյուղու հորի հավաքովի ե/բետոնե կոնստրուկցիաների տեղադրում	$մ^3$	0,270	19,472	5,26
10	ԿԿ 7-9 պատի օղակի արժեքը	հատ	1,000	15,048	15,05
11	ԿԿ 7-3 պատի օղակի արժեքը	հատ	2,000	10,540	21,08
12	ԿԿօ-1 հենարանային օղակի արժեքը	հատ	1,000	4,013	4,01
13	Մետաղական պատյան խողովակի տեղադրում d=150մմ	զմ	1,000	8,433	8,43
14	Թուջե մտոցի արժեքը	հատ	1,000	60,192	60,19
	Ընդամենը	2,51	%		2300,65
	Ոռոգման ցանց			0,000	0,00

1	2	3	4	5	6
1	Dy32x2.5 մմ խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրակցվող խողովակներից /հիդրավլիկ փորձարկումով/	զմ	463,0	1,430	661,93
2	Dy32x2.5 մմ խողովակաշարի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացումով	զմ	463,0	0,688	318,42
3	Dy25x2.5 մմ խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրակցվող խողովակներից /հիդրավլիկ փորձարկումով/	զմ	352,0	1,178	414,72
4	Dy25x2.5 մմ խողովակաշարի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացումով	զմ	352,0	0,688	242,08
5	Dy25x2.5 մմ խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրակցվող խողովակներից /հիդրավլիկ փորձարկումով/ Ջրավազաններ	զմ	150,0	1,178	176,73
6	Dy25x2.5 մմ խողովակաշարի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացումով ջրավազաններ	զմ	150,0	0,688	103,16
7	Dy25մմ պողպատե արմունկներ Ջրավազաններ	հատ	13,0	0,539	7,01
8	Ջրթող հանգույցների տեղադրում D25մմ	հատ	11,000	0,428	4,71
9	Խողովակառստ (муфтер) D=25մմ, L=25սմ	հատ	11,0	1,070	11,77
10	Փական, Dy25 PN = 1.0 ՄՊա	հատ	12,0	3,771	45,25
11	Ռետինե փողրակ d=25մմ,L=10.0մ. 5-հատ	զմ	50,0	0,187	9,36
12	Dy32մմ պողպատե արմունկներ	հատ	5,0	0,539	2,70
13	Dy25մմ պողպատե արմունկներ	հատ	6,0	0,539	3,23
14	Պողպատե պատյանի ներկում յուղաներկով կրկնակի անգամ	$մ^2$	2,00	1,249	2,50
15	Պոլիմերա-ավազային փականային հոր ծածկի սալով	հատ	1,0	73,833	73,83

1	2	3	4	5	6
16	Dy65xDy32 պողպատե խողովակների միացում	տեղ	1,0	2,730	2,73
17	Dy32xDy25 պողպատե խողովակների միացում	տեղ	3,000	2,730	8,19
18	Dy25xDy25 պողպատե խողովակների միացում	տեղ	3,000	2,630	7,89
19	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք	$մ^3$	50,000	2,320	116,01
20	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք	$մ^3$	40,000	4,092	163,68
21	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 7կմ /5մ3/	տն	9,500	2,497	23,72
22	Հետլիցք տեղի բնահողով ձեռքով ,տոփաումով	$մ^3$	85,000	0,970	82,47
23	Ասֆալտաբետոնե ծածկույթի կտրում	գմ	27	0,381	10,29
24	Ա/բետոնի ծածկույթի քանդում ներառյալ նախաշերտերը հ-21սմ /16,2մ2/	$մ^3$	3,402	2,190	7,45
25	Շին.աղբի բարձում և տեղափոխում 7կմ	տն	6,804	2,497	16,99
26	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	16,200	1,302	21,09
27	Խոշորահատիիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 6սմ հաստությամբ	$մ^2$	16,200	4,466	72,36
28	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 3սմ հաստությամբ Բ տիպ	$մ^2$	16,200	2,438	39,49
	Ընդամենը	2,89	%		2649,74
	Լուսավորություն			0,000	0,00
1	Էլեկտրական բաշխիչ վահան 12 մոդուլ	հատ	1,0	12,775	12,77

1	2	3	4	5	6
2	Մետաղյա Բաշխիչ վահան 800x500x200մմ 48 մոդուլ արտաքին	հատ	1,0	74,859	74,86
3	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա	հատ	1,0	3,114	3,11
4	30մԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔ. 1 բևեռ 10Ա	հատ	1,000	32,921	32,92
5	30մԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔ. 1 բևեռ 16Ա	հատ	2,0	41,469	82,94
6	30մԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔ. 3 բևեռ 6Ա	հատ	2,0	17,633	35,27
7	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 16Ա	հատ	1,0	4,818	4,82
8	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 20Ա	հատ	1,0	4,818	4,82
9	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 25Ա	հատ	1,0	4,860	4,86
10	Ավտոմատ անջատիչ 3 բևեռ 32Ա	հատ	1,0	5,302	5,30
11	Կոնտակտոր 16Ա 1Բևեռ	հատ	12,00	10,521	126,25
12	Ժամանակային ռելե 16Ա 1Բևեռ	հատ	1,0	15,585	15,58
13	Մեկուսիչ ժապավեն	հատ	20,0	0,421	8,43
14	20մմ PVC խողովակ	մ	1000,0	0,373	372,71
15	20մմ PVC ճկախողովակ	մ	600,00	0,590	354,21
16	32մմ PVC խողովակ	մ	700,00	0,505	353,51

1	2	3	4	5	6
17	80x80x75 մմ ՊՎՔ խողովակի միացման տուփ	հատ	110,000	0,502	55,18
18	ВВГ- 3x0.75մմ^2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում հենասյուների միջով	գմ	350,00	0,319	111,70
19	ВВГ- 3x1.5մմ^2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	1600,00	0,499	798,79
20	ВВГ- 3x2.5մմ^2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	25,00	0,739	18,48
21	ВВГ- 5x1.5մմ^2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	700,00	1,231	861,38
22	ВВГ- 5x4մմ^2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում խողովակով խրամուղի	գմ	370,00	1,558	576,45
23	ВВГ- 5x6մմ^2 հատվածքով պղնձե ջղերով մալուխի անցկացում ենթակայանի կոնստրուկցիայով	գմ	15,00	2,295	34,42
24	2.5-4մմ Հաղորդալարի միացման 3 տեղանոց ամրակ /կլեմնիկ/	հատ	350,000	0,214	74,91
25	2.5-4մմ Հաղորդալարի միացման 5 տեղանոց ամրակ /կլեմնիկ/	հատ	50,000	0,421	21,07
26	Վահանակ (1x2մոդուլ)	հատ	3,0	7,504	22,51
27	Միդիրքային վարդակ	հատ	2	1,698	3,40
28	Միդիրքային անջատիչ	հատ	1	1,457	1,46
29	360՝ Բաժանիչ տուփ սենսորային PIR անջատիչ	հատ	7,0	23,595	165,17
30	A1 Տիպի կետային լուսավորության սարք IP44 18Վտ	հատ	32	7,838	250,80
31	A2 Սյան լուսատու 15Վտ	հատ	72,0	17,090	1230,47

1	2	3	4	5	6
32	A3 Լուսարձակ 10Վտ	հատ	7,0	17,511	122,58
33	A4 Լուսարձակ 20Վտ	հատ	2,000	19,518	39,04
34	A5 Սյան լուսատու 36վտ հենասյունով՝ Նյութ – ալյումին Բարձրություն – 230 սմ 36Վտ	հատ	22,000	97,448	2143,85
35	E1 վթարային EXIT տիպի լուսատու 12Վտ	հատ	4	11,058	44,23
36	Հենասյուն H=3.6մ, Φ50մմ	հատ	72,000	21,980	1582,58
37	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք	մ^3	250,0	2,320	580,04
38	Հետլիցք ձեռքով տեղի բնահողով տոփանումով	մ^3	250,0	0,970	242,56
39	Բետոնե հիմքերի պատրաստում պատրաստում B-12.5 դասի բետոնից հենասյուների համար	մ^3	2,840	52,145	148,09
	Ընդամենը	11,59	%		10621,54
	Ընդամենը /հազ. դրամ/				91650,99
	Այդ թվում սարքավորումներ				193,33
	Ընդամենը /հազ. դրամ/ առանց սարքավորումների				91457,66
	Շահույթ	9,1%			8322,65
	Ընդամենը /հազ. դրամ/ սարքավորումներով				99973,64

Կառույց Ա/Կ տնօրեն Տիրուն Պողոսյան

Հավելված թիվ 2
« 10 » 08 2021 թ. կնքված
N «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03»ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման աշխատանքներ	Համաձայնագրի կնքման օրից	30.11.2021թ
2	Շին վերանորոգման աշխատանքներ	Համաձայնագրի կնքման օրից	30.11.2021թ
3	Ջրամատակարարման ցանցի կառուցում	Համաձայնագրի կնքման օրից	30.11.2021թ
4	Ոռոգման ցանցի կառուցում	Համաձայնագրի կնքման օրից	30.11.2021թ
5	Լուսավորություն	Համաձայնագրի կնքման օրից	30.11.2021թ
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի քաղաքային համայնքապետարան
ք,Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101171
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կառույց>>Ա/Կ
Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ04100723
Տնօրեն՝ Տ.Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
« 10 » 08 2021 թ. կնքված
N «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231270	**Արարատի քաղաքային զբոսայգու կապիտալ վերակառուցման աշխատանքներ**	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի քաղաքային համայնքապետարան
ք.Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101171
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կառույց>>Ա/Կ
Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ04100723
Տնօրեն՝ Տ.Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ